

Մեզ պէս տրկար մարդ է նա էլ,
Սիրուններին միշտ գերի.—
Քու ճակատին թագ է վայել,
Լինիս շքեղ թագուհի...

Լըսում է չքնաղ թըմկայ տիրուհին,
Գիշեր ու ցերեկ, նորինց ու նորինց.
Եւ դարձաւ նա լո՛ւռ, դալո՛ւկ, մըտախո՛հ,
Եւ քունը փախաւ նրրա աչքերինց...

Յովհ. Թումանեան

(Կը շարունակուի)

Դ Է Պ Ի Ա Ն Ի

Ալէքսանդրապոլը Անիի նախագաւիթն է. ճանապարհորդները առանց առաջինն այցելելու, դէպի երկրորդը չեն գնում: Սա մի երջանիկ զուգադիպութիւն է գոնէ ինձ համար: Երգիչների, երկաթագործների և քարտաշների այս քաղաքը ինձ միշտ գրաւել է հեռուից: Ես հասկանում եմ Վիկտոր-Հիւզօին՝ երբ նա ասում է՝ «Արևելքը չեմ տեսել, բայց զգում եմ»: այնքան բան կայ աշխարհում, որ մենք զգում ենք հեռուից. դա մարդկային հոգու սքանչելի կարողութիւնն է:

Ես միշտ զգացել եմ Ալէքսանդրապոլը և ուրախ եմ, որ այժմ տեսնում եմ, թէկուզ շատ կարճ ժամանակով և այն էլ արտաքուստ միայն:

Վաղ պոռտոտ է, բայց քաղաքն արդէն րոքի վրայ. շուկան կենդանի է, խանութները բաց են, արհեստանոցները եռում են: Կառապանը կարծես գիտէ իմ թուլութիւնը դէպի մուրճն ու հնոցը, և նա տանում է ինձ յատկապէս այն փողոցներով, ուր ալէքսանդրապոլցիին երկաթն է ծեծում: Այստեղ դռների առաջ, պատերի վրայ կախվիտուած են բազմաթիւ գործիքներ, բահ ու կացին, խոփեր ու գերանդիներ և մանաւանդ

շղթաներ, կուռ ու երկար շղթաներ, որոնցով արօրն ու գու-
թանը կախուում են երկրի կրծքից: Շիրակի լայնահաստ ու բա-
րեբեր դաշտերում մաշուող բոլոր գործիչները այս հնոցներում,
այս մուրճերի տակ են կուռում ու կոփւում:

Եւ ինչ երկար է արհեստանոցների շարքը: Անծանօթ
մարդուն թւում է, թէ՛ ողջ Ալեքսանդրապոլը գիտէ միայն այն
արհեստները, որոնք կապուած են մուրճի հետ: Կառքն անց-
նում է արագութեամբ այս փոշոտ, քարոտ փողոցներով և ես
այնուամենայնիւ տեսնում եմ գործանոցների շարքը, ուր թի-
թեղը, երկաթն ու պողպատը հեծեծում են մուրճերի տակ: Եւ
սալի վրայ կոացած ամեն մի լայն թիկունք, մուրճի հետ բար-
ձրացող ամեն մի ուժեղ բազուկ, իմ մէջ զարթեցնում է մի
խենթ ցանկութիւն ճշալ հեռուից. «Ձարկ զարկ, իմ ընկեր,
դա այնքան գեղեցիկ է, այնպէս ազնիւ, զարկ, թող սալը տըն-
քայ»:

Նրանք սակայն իմ կոչին պէտք չունին, զարկում են հն
զարկում, և սալը տնքում է: Ես սիրում եմ այս ցածիկ, մրոտ
շէնքերը, ուր մետաղները կրծում են իրար, ուր դարբնւում են
այնքան լաւ բաներ: Ազնիւ, ստեղծագործող մի շեշտ կայ մուր-
ճերի յաղթ շոխիդի մէջ: Մալերի շուրջը ամեն ինչ խօսում է
մի չարքաշ ու հպարտ կեանքից, որ տքնում է և գիտէ թէ ին-
չո՞ւ եւ այն պղտոր քրտինքը, որ ընկնում է ու թշուում շի-
կացած երկաթի վրայ, և՛ մոմացող հնոցը, որ լափում է
ու գտում, և՛ ծանր մուրճերն ու խուլ կերպով տնքացող փուք-
սը և՛ այն այրուած բազուկներն ու դէմքերը, այն կնճռոտ ճա-
կասները և այս բոլորը՝ սև՛, սև՛, և բոլորը՝ այնուամենայնիւ
ըմբոստ են: Մուրի և քրտնքի մէջ շաղախուած այդ մէջքերը ա-
ռուաւորից երեկոյ կնանում են սալի վրայ, դրսում, այն սև խա-
նութից դուրս երբէք չկանայու համար: Այնտեղ ամեն ինչ
տնքում է, բայց հարուածողը չի սիրում տնքալ, մուրճի ձայնն
ու թափը ազնուացնում են հոգիները: Այդպէս են արհեստա-
ւորները:

Հասկանալի է, թէ ինչո՞ւ ալեքսանդրապոլցին այնպէս սի-
րում է երգը: Գողթան գինիները չկան այստեղ, բայց կան
արհեստներ. ես չեմ պատահել, որ վաճառականը իր կասկա-
ծելի արշինը չափէր երգելով, բայց լաւ գիտեմ, որ պատը եր-
գելով են շարում, մուրճը երգելով են զարկում, անգամ կտա-
ւը երգով են գործում: Ալեքսանդրապոլցին իր երգի համար
ներշնչումը վերցնում է հայրենի աւերակներից, իսկ եղանակն
իր քամիներից ու մուրճերի ձայներից:

Եւ այս բոլորի վրայ «խանըմ-արլաների» օրհնութիւնը

կայ: Ալէքսանդրապոլի արլաները... լաւ ու աւանդապահ կա-
նայք, որոնց անցեալ գեղեցկութեան փայլը այնպէս հմայիչ է
դարձնում իրանց ծերութիւնը և մայրութիւնը, որոնք սիրում
են ցերեկները թխսերի պէս թոռների հետ նստել բաց դռնե-
րի առաջ, իսկ առաւօտ ու երեկոյ եկեղեցի գնալ աղօթելու
նախ օտարների, ապա իրանց զաւակների համար: Եւ տեսնում
եմ նրանց, այն սիրուն արլաներին, իրանց գորշ զգեստով, մի
փոքր առաջ կոացած պարանոցով և երկայն շալը գլուխներին:
Նրանց դանդաղ ընթացքը արիութեան ու առաքինութեան
հանդիսատրութիւն ունի: Աբլայ և Ալէքսանդրապոլ երկու ան-
բաժան հասկացողութիւններ են, և մէկն ապրում է միւսով:
Այս ժողովրդի համար արլան մի հինաւուրց կոթող է, ուր
փորագրուած են բարոյական կեանքի պատգամները:

Հէնց ինքը՝ Ալէքսանդրապոլը, կարծես մի մեծ արլայ է,
մի պառաւ մայր, որ բազմել է հարթութեան մէջ հանդարտ
ու անխռով, մինչդեռ անսասնձ քամիները ձմեռն իրանց ձիւնով
և ամառը փոշու ամպերով ծեծում են նրա ծեր գլուխը:

Խեղճ քաղաք... Նրա արտաքինը համարեաւ ոչ մի գրաւ-
չութիւն չունի: Հարթութեան վրայ ապրող այս մարդիկ զէպի
երկինքը քիչ ձգտում ունին արդեօք, թէ՞ ուրիշ պատճառներ
կան, չգիտեմ, բայց երկյարկանի շէնքերն այստեղ այնքան քիչ
են, որ Ալէքսանդրապոլն իրօք կարող է անուանուել միյարկանի
քաղաք: Եւ յետոյ նրա գորշ ու սև քարերը հեռուից նայողի վրայ
այն տպաւորութիւնն են գործում, որ կարծես քաղաքը նոր
ենթարկուել է հրդեհի: Հարթութիւնը միակերպ, քաղաքը տա-
փակ ու չորս կողմից միանդամայն բաց հողմերի առաջ, որոնք
ամառ թէ ձմեռ տէր են այստեղ: Ծառեր չկան ոչ շրջակայքում
և ոչ քաղաքում, որպէսզի մի փոքր թուլացնեն տեսարանի
տաղտկութիւնը: Այս բոլորի փոխարէն բարձրանում են բազ-
մաթիւ եկեղեցիներ, հոյակապ, երկնասլաց գմբէթներով. հը-
պարտ շէնքեր, որոնք կարծես Անիի աւերածից են խոյս տուել
և այստեղ ապաստան գտել աւանդապահ ժողովրդի ծոցում:
Ալէքսանդրապոլը սիրում է և հպարտ է իր եկեղեցիներով:
«Հազար ու մի եկեղեցիների» մոխիրների կողքին ապրող ժո-
ղովուրդը իբնէ յարած է անցեալին և հետամուտ հինը վերըս-
տեղծելու:

Եւ ես սիրում եմ այս հողմածեծ, փոշոտ, խղճուկ քաղա-
քը. սիրում եմ այն անքննադատ ու կոյր սիրով, որ մարդուս
կապում է ծխի մի պտոյտի, մի կորած խրճիթի, խոտերի դէպի,
աւերակների, սև քարերի, այլանդակ ժայռերի, մթին սար ու
ձորի, անգամ խանձուած անապատների հետ: Սիրում եմ Ա-

չէքսանդրապոլի բարբառը, զգեսաը, նրա երգը, պարապմունքները, սիրում եմ մանաւանդ նրա խորունկ սէրը դէպի մեր հինաւուրց անցեալի յիշողութիւններն ու յիշատակարանները: Անիդէալ ու անյոյզ բաղաբը նոյնքան զուեկի է, որքան լուսնաանական պէտքերին հետամուտ մարդը: Ալէքսանդրապոլի ամբողջ, չխեղաթիւրուած հոգին այնքան հարազատ գծեր ունի ինձ համար:

Քաղաքից դուրս ենք, մեր առջևն է Շիրակի ալեծածան հարթութիւնը, և լայնանիստ Արագածը, որ մի մօր պէս բազմել է շրջակայքի բլուրների մէջ: Նա ոչ Մասիսի երկնասլաց ու խրոխտ վեհութիւնն ունի, և ոչ էլ նրա խիստ տեսքը: Արարատեան աշխարհի երկու հսկաները ոչնչով նման չեն իրար. մինչդեռ մէկը վերաւորուած, դաժան ծեր իշխանի է նման, որ սակայն չի ուզում գլուխ ծռել բախտի առաջ և իր զայրոյթի մէջ ատում է աշխարհը, ապրում է հոյակապ մենաւորութեան մէջ ու ժլատ է բարիքով, միւսը՝ Արագածը մի անյիշաչար մայր է, բարի ու գթոտ, որի ձեռները բաց են բարիքի համար, որի ճակատի խորշոմները միշտ ժպիտ ունին իր հովանու տակ ծուարած բլուրների, իր կուրծքին թառած գիւղերի համար:

Անոյշ Արագած...

Ամեն ինչ մեղմ է նրա արտաքինի մէջ. և՛ կատարները, որոնք շուրջանակի բոլորել են և թագ կազմել նրա գլխին, և՛ ձորերը, ուր իջուածքները կախուում են զգուշութեամբ, որ վերեքն անկարելի չդառնայ, և՛ ժայռերը, որոնք պինդ նստել են նրա կրծքին, որպէս զի վար չընկնեն. չէ՛ որ նրանց ստորոտներում չարքաշ մարդն է տքնում: Եւ յետոյ նա հովիտներ ունի ջրաշատ ու հարուստ, սիրուն դարաւանդներ, կանաչ պուրակներ, փապարներ, խոխոջուն ջրեր, որոնք բարերի տակից ծորում են կաթնի պէս և ցօղում նրա գեղուն կուրծքը: Ոչ ոք դժգոհ չէ նրանից, և՛ թափառական թաթարները իրանց հօտերով, և՛ աւազակ թւրքերը, և՛ մանաւանդ շինարար, վաստակաւոր հայ գիւղացին, որ կպել է նրա կրծքին վարում է և ցանում, նրա լայն հոգուն խառնել է իր հոգին և պաշտում է իր լեռը, այդ հինաւուրց մօրը:

Սիրուն Արագած...

Վաղորդեան թափանցիկ մշուշը իջնում է նրա կատարից մինչև ստորոտները ինչպէս մի հսկայական քօղ եւ նրա տակից լեռը կարծես յօրանջում է մեղմիւ ու զարթնում: Եւ այն քօղը բազմերանգ է, նուրբ, հազիւ նկատելի գոյների մի սքանչելի խաղ կայ վերից վար, ձիւնափայլ սպիտակ՝ կատարին, նա իջնում է վար մուգ-կապոյտ, բաց-կապոյտ, թոյլ մանուշակա-

գոյն, ոսկեգոյն, և ստորտօններում հողագոյն երանգներով: Ամենից բարձր՝ հէնց կատարի թագի վրայ՝ ճերմակ ամպերի մի շարան կայ, եթերային, սպիտակազդեաւ աղջիկների մի խումբ, որոնք իրար յետեից կուացած՝ ասես արտ են քաղհանում: Արագածից աջ ու ձախ՝ գնացող բոլոր լեռները, Ալաշայի արևմտա բարձունքները նոյնպէս ճերմակ ամպեր ունեն կատարներին: Ամենքը կարծես նախընթաց գիշերը սպիտակ շրդարշով գլուխները փաթթած են քնել թեթև անձրևի տակ հարբուխ չստանալու համար և այժմ՝ հազիւ զարթնած, դեռ չեն բացել ճակատները ծագող արևի շողերի առաջ:

Ներքեւում՝ լեռնալանջերի վրայ ծուխ է բարձրանում ուրու-մուրու: Գիւղերն են զարթնել և թոնիրների առաջին հեքն է այն: Հով չկայ և ծխի պտոյաբ ոլորուն սիւնով երկար ժամանակ իշխում է դաշտի վրայ, նա ճգնում էլի բարձրանալ, բայց ծայրը երերում է, լայնանում ու փունջ կազմում և ի վերջոյ մեղմիւ լուծւում է մշուշի հետ առանց կարողանալու հասնել լեռնակատարներին: Եւ ճերմակ ամպերը, կ'նրանց տակի կատարները նայում են վար, արևի շողերի առաջ ժպտում են մեղմիւ ծխի անզօրութիւնը տեսնելով: Նրանք հպարտ են, որ սև կեանքից, խեղճ ու կրակ աշխարհից խօսող այդ ծուխը չի հասնում եթերային բարձունքին, և նրա մուրը վերստին մաղւում է նոյն անքացող երկրի վրայ:

Երկիրը երկինք երբէք չի դառնայ:

Աշնանային բնութեան այդ առաւծտը... Նա սիրուն է անգամ իր հոգևարքի անհուն ու մեղմ ժպտով: Ամեն ինչ յիշեցնում է հոգու այն կացութիւնը, երբ գերագոյն վայրկենում կիրք ու յոյզ մեղմացած՝ մարում են կամացուկ և նրանց տեղը մնում են միայն ազօտ, հրաշալի երազներ, և մարդկային միտքը հանդարտ լողում է անհունի թևերից թափթփող փոշու մը-շուշի մէջ դէպի անյայտութիւնը: Եթէ վառ ու փարթամ գարնան արօղիան շնչում է խանդ ու եռանդով, որ կեանք ու թափ է տալիս հոգուն, աշնանային արօղիան տխրութեան ու թախիծի խորութիւնն ունի, որ խօսում է մի այլ և գերազանց կեանքից:

Մեռնող տերևը փթթած վարդի չափ խորհուրդ ունի մարդ գեղեցիկ կեանքերը միշտ մի ծնունդ արժեն:

Նայում եմ առաջս ձգուած Շիրակի պեծածան հարթութեանը, ուր դարձեալ իշխում է աշունը իր միապաղաղ դեղնութեամբ: Սոզաններ, խոզաններ... բարեբեր հողը պսակել է վաստակաւոր մարդու ճիգը, ցորենն աճել է, մեծացել ու հընձուել և այժմ նա յոգնած կուրճքը դէմ առւած արևի շողե-

բին՝ հանդարտ հետև է ու հանգստանում: Դեղեցիկ չէ այդ Շիրակի դաշտը մանաւանդ աշնանը, երբ նա այնպէս ամայի է թւում, երբ կանաչ ու ծաղիկ չկայ, ուր հայեացքը հանգստանայ, և ամբողջ պատկերը խօսում է մի անցեալ գեղեցիկ կեանքից: Նայում ես որքան այքդ կտրում է և ամեն տեղ առաջդ տարածւում է այդ դեղնութիւնը. որպէս կեանքի միակ նշան Ախուրեանն է թաւալում հարթութեան միջից, դանդաղ, քմահաճ ու գալարուն և նրա փերին՝ որպէս կանաչ երիզներ՝ անընդհատ ձգւում են ցածրիկ խոտերի երկու անվերջ շերտեր:

Տեղ-տեղ միայն երևում են սև ցելեր, որոնք թէև զբաւիչ լինելուց շատ հեռու են, բայց և այնպէս այս միապաղաղ գեղնութեան մէջ հաճելի հակապատկեր են կազմում: Աւելի հեռուն գործում է գութանը, միքանի շարք լծուած ամոններ ճրկւում են պարանոցները ձգած ցաւագինօրէն և նրանց լծերի վրայ նստած գիւղացիք լուռ շարժում են խարազանները: Անասունները քաշում են հեւալով, բայց տէրերը չեն երգում նրանց աշխատանքի ծանրութիւնը մեղմելու համար: Ես առաջին անգամն եմ տեսնում հօտաղներ, որոնք «հօրօվէլ» չեն ասում լծան վրայ. միթէ Շիրակի գութանաւորը համր է... Եւ վաստակաւոր անասունների տնքոցի և չարքաշ գիւղացիների այդ լուռութեան մէջ մի ծանր, ճնշող բան կայ, որ յիշեցնում է գերեզմանափորի աշխատանքը: Թւում է, թէ մարդիկ և անասուններ դատապարտուած են կատարել մի անհաճոյ ու վիատեցուցիչ գործ, որի դէմ իրանց էութիւնը բողոքում է: Եւ սակայն դա «Հայի գութանն է», այն լեզենդական գործիքը, որին զոհել է նա դարերի ընթացքում այնքան լաւ բաներ, անգամ իր խենթ արիութիւնն ու հպարտութիւնը, բայց և այնպէս նրա վրայ ծով քրտինք է թափել, և երգել, երգել է նրա լայն ակօսը, նրա փայլուն խոփը, նրա յաղթ շղթաները, նրա հատու ձևիչը: Այժմ նայում եմ այդ փնչացնող անասուններին, նրանց հաստ, հնազանդ պարանոցներին նստած մռայլ ու լուռ գիւղացիներին և այդ լուռութիւնը՝ ճնշում է նաև ինձ: Համր գութանը ինչպէս և ամեն մի համր աշխատանք լուռ գալարումներին, անձայն ցաւի շեշտ ունի: Ինչո՞ւ են լուռ սրանք, բարեբեր Շիրակի այս գիւղացիները, ո՞վ է խլել նրանցից աշխատանքի, տքնութեան այս գերագոյն հաճոյքը՝ երգը:

է՛հ, երբ չեն երգում, ապա ուրեմն չի երգում: Ինքս եմ սկսեմայ մոմոում:

«Հայի գութանն, հայի գութանն

«Որի համար կը ջանաս...»

Ամեն ինչ ձանձրալի է աշխարհում, անգամ հաց «տուռոզ դարաւոր գութանը, որի վրայ ծով քրտինք է թափուած, որին զոհ են գնացել այնքան լաւ բաներ:

Գութանից իմ ուշադրութիւնը դառնում է դէպի նախիրը, որ մի սև ու կենդանի զանգուածի պէս յեղյեղում է նոյն դեղ-նաւուն հարթութեան վրայ: Ահա նա հասաւ մեզ և կտրում, անց-նում է ճանապարհը: Վտիտ փոքրիկ կենդանիներ են, խեղճ, երերուն քայլուածքով. այս չորացած դաշտերում թնչ պիտի ճարակեն խեղճերը: Երևի այդ է պատճառը, որ նրանք քաշ են տալիս ոտները գետնի երեսից ծոյլ-ծոյլ և ահագին փոշի բարձրացնում, որ խեղոյն նստում է նրանց մէջքին: Մանր տպաւորութիւն է գործում մարդու վրայ այդ ամբողջ նախրի տեսքը: Անասունների ընտրութիւնը և խնամքը մեր երկրում տակաւին շատ նախնական պայմաններում է գտնուում: Հայ գիւղացին այդ կողմից չափազանց յետ է մնացել: Կեանքը այնպէս դանդաղ է յեղաշրջւում, որ այս թափանցող, առաջադիմութեան հետամուտ մարդիկ անկարող են լինում փոփոխութիւններ մտցնել իրանց նիստ ու կացի, իրանց սովորութիւնների, պարագմունքների մէջ: Այս դաշտերը, այս գութանը իր հօտադներով, այո նախիրը իր ձանձրալի նախրապանով հազարաւոր տարիների պատմութիւնն են ներկայացնում, բայց մի քարացած պատմութիւն, ուր ոչինչ չի փոխուել, ոչ մի ցընցում չի աղմկել թէկուզ մի հատիկ վայրկեանը: Անթիւ սերունդներ այս ձևով վարել են այսպէս, վագել՝ անասունների յետևից և անցել:

Այս խեղճ նախիրը երբ պէտք է փոխուի... և բոլոր նախիրները...

Դարերի պատկերը կատարեալ դարձնելու համար ճանապարհի վրայ յայտնուում են նաև մի խումբ բոշաներ էշերի վրայ. թափառական անապաստան ժողովուրդ, որ առեղծուածական գոյութիւն ունի և որ իր հայրենիքը միջանի գործիքների և մազէ վրանի հետ բարձած իր էշին, քայլում է բոլոր ճանապարհներով, սիրում է բոլոր հորիզոնները, ամեն տեղ անհոգ կերպով յօրանջում է երկնքի երեսին ու զարմանում, որ իր գլխին միշտ նոյն աստղերն են, նոյն մութ կամարը: Չարմանալի մարդիկ... չգիտես ցաւէս, թէ երանի տաս սրանց, որ հաւատ չունեն դէպի աշխարհի և առհասարակ կեանքի իրերի կայունութիւնը և գերադասում են անհաստատ կեանքը յարատե թափառականութիւնը: Շինութիւններ և հաստատուն ընակութիւն արհամարհող այս մարդկանց հետ իմ հանդիպումը մի տրագիկ խորհուրդ է ստանում, երբ մտաբերում եմ, որ գնում եմ աւե-

րակներ այցելելու, գոռոզ, հոյակապ շէնքեր, որոնցից միայն մոխիր է մնացել: Վերստին նայում եմ այս խեղճ մարդկանց, նրանց վտիտ, տանջուած էշերին, շիվերից գործած միջանի կարասիներին, նրանց թուխ մարմինները պատող ողորմելի զգեստներին. նայում եմ և մտածում, որ միայն այդ գնով նրանք ազատ են աշխարհում, ազատ են նաև այն պատրանքներից, որոնցով ապրում են մարդիկ՝ մեծը, գեղեցիկը ստեղծելու իրանց անդուլ ճիգերով, անյագուրդ իղձով: Եւ, այնուամենայնիւ, մի խորին արգահատանք եմ զգում դէպի այս թափառական մարդիկը, դէպի այս չնչին գոյութիւնները, որոնք ոչ դէպի վերնագոյն բարձրունքները նետուելու խենթ հաճոյքն են զգում և ոչ անկման ու աւերակի դառնութիւնը: Քաղաքակրթութիւն, գեղարուեստ, գիտութիւն, առաջադիմութիւն, փառք՝ ողջ պատրանքներ են գուցէ, բայց կեանքը առանց այդ պատրանքների էլ աւելի գարշելի էլ աւելի անտանելի կը դառնայ: Պատրանքներով ենք միայն ապրում: Տառապալից գոյութիւնը գերադասելի է տափակ անհամ կեանքից:

Խեղճ բոջաներ, կողոպտուած, անգոյն հոգիներ:

Ճանապարհը բանուկ է. անդադար անցում են մեր առաջից հայ գիւղացիներ սայլով, էշով կամ ձիով: Վտիտ անասուններ՝ բայց ամենից աւելի արտասուելիւն էշերն են: Ոմանց պոչերը կը տրուած, ուրիշները տանջուած ու նիհար, համարեա բոլորը քերծուած կողերով—այդ անասունները խղճալի տպաւորութիւն են գործում: Դժբանտ կենդանի, դարերի անհասկանալի նահատակն է նա. լինել այդքան հանգիստ, համբերատար, խաղաղ և օգտակար և այնպէս արհամարուած, միշտ ծեծուած, քաղցած. սա իրօք գերագոյն անարդարութեան հազուագիւտ մի փաստ է: Զարմանալի չէ, որ էշը դարձել է սիմվոլ ապուշ ստրկութեան: Մի նշանակալից հանգամանք սակայն: Անասունների կրած տանջանքը լաւագոյն չափն է տէրերի մտաւոր աստիճանի, նրանց խղճի զարգացման, աւելին կ'ասեմ, նրանց սեփական վիճակի: Բոլոր տանջուած էշերն, օրինակ, նոյնքան յիմար, և նոյնքան տանջուած, հարստահարուած, բթամիտ տէրեր են ունենում, որոնք աշխարհում գթութիւն չգտնելով ոչ մի տեղ, իրանք էլ իշխելու, ընկճելու իրանց մութ ու տգեղ ցանկութիւնը գործադրում են անքան անասունների վրայ: Շվէյցարիայում, ուր անատի իրաւունքները այնքան յարգուած են, ուր հասարակական ու անհատական խիղճը այնպէս զարգացած է, անասունները դարձել են ընդհանուր խնամքի և գթութեան առարկայ. վերաւոր ու վտիտ կենդանիներ այնտեղ թիստ հազուագիւտ են: Որքան ստրուկ և դժբանտ է մի ժողովուրդ, նոյնքան

307 ՌԲ-1360



Նա անդուժ է թէ դէպի իր նմանները, թէ դէպի կենդանիները: Շիրակի դաշտերում թափառող անասունները ոչինչ լաւ բան չեն ասում իրանց տէրերի նիւթական և բարոյական մակերևոյթի մասին:

Ահա այդ գիւղացիները, այդ անասունների տէրերը: Դէպի գետին կոացած՝ հողագոյն դէմքեր, որոնց վրայ յոյզերը վաղուց մարել են. յոգնած աչքեր, որոնք նայում են անծանօթին անվստահութեամբ, համարեա մի բնազդական վախով: Նրանք անցնում են մեր առաջից և մի այնպիսի հայեացք են ձգում անցորդի վրայ, որ կարծես ոչ մի լաւ բան չեն սպասում կառքով գնացող և լաւ հագնուած մարդուց: Հողին կպած մարդիկ են, քայլում են կոացած, միշտ մի բան խորհողի, փնդրողի տեսք ունեն, աքնել են, վաստակել հողի վրայ, բայց երկինքը յաճախ ի դերև է հանել նրանց աշխատանքը, փոթորիկն է փչացրել արտը, կարկուտը ոչնչացրել, հեղեղը տարել, ցաւը քնասել, միջատները կերել են. ահա թէ ինչո՞ւ գիւղացին վախենում է ամպից, քամուց, կայծակից, նա չի հաւատում երկնքի, կարեկցութեանը և աղօթքով է աշխատում մեղմել նրա խստասրտութիւնը: Այդ հասկանալի է, բայց մարդը... Ի՞նչ է արել նրանց մարդը, որ այսքան անվստահ են դէպի անծանօթ անցորդները: Ո՞վ է սպանել սրանց մէջ հաւատը դէպի իրանց նմանները. ո՞վ է վիրաւորել նրանց հոգին և կասկածի, անվստահութեան, յարատև երկիւղի թոյնը կաթեցրել այնտեղ:

Բողաների պէս սրանք էլ խեղճ, կողոպտուած հոգիներ են: Գնում ենք անընդհատ, բայց տեսարանը չի փոխւում, միշտ դեղին խոզաններ և նրանց մէջ էլ գալարուն Ախուրեանը, հեռուն՝ Ալաջայի լեռները, դէպի աջ՝ Արագածը, որ անդադար ձևափոխւում է, քանի փոփոխւում է մեր տեղը: Ախուրեանի փերին տեղ-տեղ երևում են բոստաններ, կանաչ օաղիսների պէս, որոնք ոռոգւում են ջրհան անիւներով: Կառապանը հաւատացնում է, որ Ախուրեանից մի փոքր ջուր խլելու միակ միջոցն է այդ և որ ջրի սակաւութիւնն է պատճառ, որ Շիրակի հարթութեան վրայ ծառեր չկան: Ես չեմ հաւատում, ինչքան և խորից հոսելու լինի Ախուրեանը, այնուամենայնիւ բարձրերը, դէպի ակունքը փորած առուններով կարող է ծեծել աւելի և աւելի ցածացող հարթութիւնները: Համարեա հաստատ կարելի է ասել, որ շիրակեցիների նախահայրերը Ախուրեանից աւելի լայն չափով են օգտուել քան այժմեան սերունդը: Վաղուց է ինչ մեր երկրում հինը կորել է և նոր ոչինչ չի ձեռնարկուել: Կեանքը բարացել է և ամուլ կտրել: Մի փոքր կուլտուրական ժողո-

վուրդը գէթ այս գետի ափերին ծառեր կը տնկէր, որ գոնէ ստուեր լինէր ճաշերին այնտեղ մակաղող հօտերի և նախիրի համար: Գնահ, որքան ուզում ես, բայց ծառ չկայ, Ախուրեանը հոսում է մերկ ափերի մէջ, նրա վրայ կամ տեղ-տեղ քաշ ընկած ժայռերն են հովանի անում, կամ երկնքից սահող ամպերը: Բայց ահա մի ծառ, մի աւերակ ծառ ամայի դաշտի մէջ, ոչ հեռու Ախուրեանից, մի փոքրիկ, կանաչաւուն հարթութեան մէջ ցցուած: Քիչ անգամ կարելի է աւելի տիրութիւն տեսնել մի անշունչ առարկայի արտաքինի մէջ: Այս խեղճ ծառը ցըցուած է մեն-մենակ շրջապատի մերկութեան մէջ, վերից ճիւղերը փշրած, վարից բունը վիրաւոր ու ծուլած, կարծես երկնքի բոլոր կայծակները նրա գլխին են ճայթել, բոլոր շանթերը նրան հարուածել: Սակայն դեռ փոքրիկ սաղարթ ունի իր վիրաւոր ոստերի վրայ և այնտեղ ծուլարում են բաղէներից խուսափած խղճուկ ճնճղուկները: Եւ ինչ շատ են նրանք այդ մի հատիկ ծառի աղքատիկ սաղարթի տակ. և դեռ չեն դադարեցրել իրանց խռոված ճթճթոցը, իսկ վերևում մի ուրուր շարունակում է իր պտոյտները, սրատես աչքերը գետնին յառած: Խեղճ, վիրաւոր ծառ, և նա այնքան կեանքերի է ապաստան տուել այս ամայի հարթութեան մէջ: Սքանչելի խորհրդանշան կուլտուրայի:

Ախուրեանի ամայի ափին մի հատ ծառ կայ լքուած ու վիրաւոր, և նրանից քիչ հեռու մի աղջիկ է թափառում մուլար, սև մազերը խուլ, տեսքն՝ այլանդակ: Քերծուած և ճաքճըքոտած ոտներով նա անյոյս կերպով խառնում է գետափի խիճերը մի թանկագին բան փնդրողի մտահոգութեամբ, կամ քայլում է գլուխը կախ, աչքեր միշտ ոտներին յառած, քայլում է մի ուղղութեամբ, ապա յանկարծ դառնում դէպի միւս կողմը և այսպէս անվերջ: «Խենթ աղջիկ է» ասում է կառապանը այնպիսի եղանակով՝ ինչպէս կ'ասէր «ձի է, էջ է, եզ է»:

Խենթ աղջիկ...

Դարձեալ մի խեղճ, կողոպտուած հոգի. իր պէս մենաւոր, իր պէս անտէր ու լքուած ծառի հետ այս աղջիկը այս երկրի վիճակի պատկերն է ներկայացնում: Կողոպտուած է յարատև տքնող, յարատև աղքատ և միշտ դողացող մարդը: Կողոպտուած է հողը, որ յոգնել է դարերի մշակութիւնից առանց պարարտանալու, լեռները ցցուած են լերկ ու ամայի, ինչպէս և դաշտերը. կողոպտուած է ամբողջ երկիրը իր հինաւուրց սքանչելի քաղաքակրթութեան զարդերից, և նրանց տեղ մնացել է միայն աւեր ու անապատ:

—Ի՞նչ է այն, կանապան, որ երևում է բլրի կատարին սյ, դէպի այլ:

«Մատուռ է» լինում է պատասխանը:

—Ապա այս միւսը...

«Աւերակ վանք»:

—Իսկ այն՝ որ հարթութեան վրայ է մեն-մենակ.

«Եկեղեցի է, աւերակ եկեղեցի է, հնուց մնացած հայու ժամեր են, պարոն, շատ կան էս կողմերում», աւելացնում է նա մի ընդհանուր ֆորմուլայով պատասխանելով իմ անվերջ հարցերին:

«Հնուց մնացած հայու ժամեր են և շատ կան էս կողմերում»...

Եւ ճիշտ որ շատ են նրանք՝ այդ «հայու աւերակ ժամերը». մեր երկիրը հէնց դրանով է հարուստ, խեղճ, միամիտ կանապանը որ մէկի անունն ասի ինձ: Բլուրների կատարներին և լեռան լանջերին ցցուած են նրանք այդ «աւերակ ժամերը» որպէս ծեր հովիւներ, որոնք ամայութեան վրայ ձեռները ճակատներին դրած՝ դեռ նայում են հեռուն վնդրելով իրանց հօտը, որ չկայ ու չկայ... Դարեր են անցնում դարերի յետեից և նրանք նայում են, մինչև որ մի սև գիշեր անդառնալի կերպով կ'ընկնեն գոռ փոթորիկի տակ:

Եւ որտեղից որտեղ, նայում եմ այդ աւերակ ժամերին և միտս են գալիս վրացի հայրենասէրները, Մերեթելիներ ու Ճաւաւաւաճէներ: Մեղադրել հային՝ թէ նա աշխատում է սեփականել Վրաստանի հին վանքերը, երբ մեր երկրի իւրաքանչիւր բլրի վրայ միջանի հատ վանք է ցցուած. սա ո՛չ միայն արսուրդ է, այլ և անպատկառ, անազնիւ, զրպարտութիւն, որ իր արտաքինի տակ ծածկել է ինչ որ ուրիշ թոյն, այլ չարամիտ խորհուրդ, որից մարդ գարշում է:

Հազարաւոր տարիներից ի վեր հայ ժողովրդի թիկունքը մաշկուած է իշխանական պալատների և վանքերի համար քարեր կրելով դէպի լեռնակատարները. անթիւ տարիներ նա շարունակ կողոպտուած է նիւթապէս, բարոյապէս, մտաւորապէս. յոյնն ու արաբը, թաթարն ու պարսիկը հաւասար եռանդով են գործել աւերելու և կողոպտելու մեր սքանչելի քաղաքակրթութիւնը: Եւ այսօր հովիւ չկայ, որ իր հօտը մակաղելու համար հայ վանքի ստուերը չընտրի, բարբարոս քիւրդ ու թուրք չկայ, որ իր վրանի ցիցերը խփելու, կամ գոմի մսուրը շինելու համար հայի հին յիշատակարանների քարերը չգողանայ: Եւ վրացի գլուխներ են ճարուած մեղադրելու հային, թէ նա գողանում է վիրական վանքերը: Ողորմելիներ, մեր

անթիւ վանքերն ու պալատներն այսօր անասունների կայաններ են, ի՞նչ անենք ձերը: Բայց զրպարտողը տրամաբանութիւն չունի: Ի՞նչպէս չիղել հայկական առածը. «հայը գէլ եղաւ աշխարհի գառը կերաւ». ձեր ի՞նչը տարաւ խեղճ ճաւճաւաձէներ, Ծերէթէլիներ:

Ճանապարհից աջուձախ անընդհատ երևում են մեծ ու փոքր գիւղեր Ախուրեանի ափերին շարուած. Կառապանը աւտում է իւրաքանչիւրի անունը աւելացնելով՝ որ հայ գիւղեր են: Առանց ասելու էլ ես գիտեմ, որ հայ գիւղեր են դրանք. եկեղեցին այդ վկայում է, սե՛ր եկեղեցին: Բոլոր այդ գիւղերը նման են իրար: Խիտ առ խիտ իրար վրայ կուտուած՝ տները հազիւ են երևում գետնի երեսին: Բոլորը տափակացած՝ կպած են հողին, բոլորը իրար են խառնուել և մի անորոշ ժխոր կազմել: Բարձր է միայն սև քարէ եկեղեցին, որ իշխում է բոլոր տների վրայ: Ոչ մի ծառ, ոչ մի պարտէզ շրջակայքում կամ գիւղերի մէջ: Բուսականութեան սովոր աչքին շրջակայքի պէս ամայի պիտի թուային այդ գիւղերը, եթէ չլինէր շների հաշոցը կամ հատ-հատ մոլորուած անասունները, որոնք կանգնած են միևնոյն տեղում երազող տեսքով, կամ, քայլում են անորոշ կերպով: Աշնանը կենդանիները միշտ տխուր, վհատուած տեսք ունեն՝ մանաւանդ՝ երբ մենակ են ձգուած դաշտի մէջ. բայց այս տափակացած, ձխուած գիւղերի կողքին նրանց տեսքն էլ աւելի յուսահատ է:

Ճանապարհը՝ Ալէքսանդրապոլից դէպի Անի, որ անցնում է այնքան գիւղերով և միակ հաղորդակցութեան միջոցն է, ազգաբնակիչութեան տնտեսական կեանքի միակ զարկող երակը, որով հազարաւոր մարդիկ են անցնում սայլերով, ձիերով կամ ոտքով, այդ միակ ճանապարհը ողբալի պատկեր է ներկայացնում: Չեմ ասում, որ նա քարքարոտ է և խորտ ու բորտ, որ նա բարձրանում է և իջնում անտեղի կերպով, որ կառքի ցընցումները մարդու աղիքներն են դալարում, ամեն անգամ, երբ անիւները վար են ընկնում մի քարի վրայից միւսի վրայ բարձրանալու համար: Այս բոլորը թերութիւններ են, որոնց հետ մեր երկրի ճանապարհորդը ստիպուած է հաշտուել. տրտունջն անօգուտ է, դա մեր երկրի օրգանական մասն է: Բայց ցանն այն է, որ այս ճանապարհը յիշած բոլոր թերութիւնների հետ ունի մի առանձին վհատեցուցիչ կողմ, նա կարծես յատկապէս այնպէս է շինուած, որ կառքեր ու սայլեր անպատճառ որոշ տեղերում շուռ գան: Կառապանն այդ գիտէ, նա հեռուից տեսնու՞ է նշանակալից տեղերը և կէս ժպտով, կէս դառնացած, խնդրում է վար իջ-

նել կառքից և ոտքով անցնել վտանգաւոր տեղը: Եւ այսպէս քանի՛ անգամ:

Ղէղաջ հայ գիւղին մօտ Ախուրեանը մի պտոյտ է կազմում մի բլրի ստորոտում և լճանում մի անդնդախոր վիհի մէջ: Հէնց այդ վտանգաւոր վիհի վրայից է անցնում ճանապարհը: Անձրևի ջրերը սրբել, տարել են ճանապարհի երեսը և առաջ է եկել մի սուր դարիվայր, որ շեշտակի վազում է դէպի ջրով լի վիհը: Եւ ճանապարհորդները և՛ կառապանը ոչ միայն ստիպուած են վար իջնել, այլև շրջապատել կառքը, կախուել ձիերի սանձերից, որ նրանք չսայթաքեն և վայր չըզլորուեն: Մի անգորշ քայլ և բոլորը Ախուրեանի մէջ կը թափուեն, որովհետև վտանգաւոր եզրին ոչ մի պատուար չկայ, ոչ ցիցեր, ոչ քարեր: Բարձրանում ենք տանջանքով բլրի կատարը և շունչ առնում գոհութեամբ, կարծում ենք, թէ ազատուած ենք. բայց միև կողմն իջնող ճանապարհը նոյնքան վատ է. այստեղ անձրևների ջուրը հոսել է ճանապարհի երկարութեամբ և բաց է արել մի քանի առուներ, որոնց մէջ պէտք է զգուշութեամբ յարմարեցրել կառքի անիւները, շուռ չդալու համար: Ծարունակել անկարելի է. կրկին վար ենք իջնում: Երևակայում եմ, թէ ինչպէս պէտք է անցնել այս ճանապարհով անձրևոտ եղանակներին, ձմրանը, մանաւանդ գիշեր ժամանակ: Դա մի կատարեալ մարտիրոսութիւն է:

Եւ գիւղը, բազմամարդ գիւղը մեր առաջն է, հարիւր քայլի վրայ, նա ամեն ժամ տեսնում է այս բոլորը. անթիւ անգամ այստեղ սայլեր են շուռ անցել, մէջքեր կոտրել, անատուներ սպանել, բարիքը փչացրել:

Եւ գիտէ՞ք ինչ է հարկաւոր այդ բոլոր վտանգներից ազատ մնալու համար—տասն մարդի մի օրուայ աշխատանք, որ ճանապարհը հարթուի և երկու կողմում խրամատներ փորուի անձրևի ջրերի համար, որոնք հեշտութեամբ կը հոսն դէպի Ախուրեանը: Էլ չեմ ասում որ քարի ու խճի առատութիւնն այս կողմերում այնքան հեշտացնում է մի լաւ խճուղու շինութիւնը, գոնէ վտանգաւոր տեղերում:

Չգիտես վրդովուե՞ս, անիծե՞ս, թէ արտասուես այս ժողովրդի անծայր տգիտութեան, բթամիտ անհոգութեան՝ այս զարմանալի փաստի առաջ, որպիսին այս ճանապարհն է: Որպէսզի մի այսպիսի սպանիչ երևոյթ հնարաւոր լինի որևէ երկրում, մեր ժամանակներում, երբ բոլորովին մօտիկ լեռան միև կողմից սուլելով անցնում է երկաթուղին, պէտք է ժողովուրդը բռնագէ գլուխ ունենայ, ուր ոչինչ չի թափանցում: Ամբողջ տարիներ, նոյնիսկ դարեր այս մարդիկը կարող են անցուղարձ անել

այսպիսի ճանապարհով, կ'անիծեն իրանց ճակատագիրը, երբ
 աայլը ջարդուի, կը փշրեն անասունների կողերը մահակով ու
 կը հայհոյեն, չգիտես մեմ, թէ մարդ մեռնի սուգ ու շի-
 ւանով հողին կը յանձնեն և կ'ուտեն հոգու հացը և այնուհետև
 դարձեալ կը շարունակեն անցուդարձը, նոյն ճանապարհով, նոյն
 տնաքանդ արկածներով և միշտ անվրդով ու խաղաղ, ասես
 ոչինչ պատահած չը լինէր: Ինքնասպան ապուշներ... մարդ
 ամաչում է այս աստիճան բթամտութեան առաջ, հայեր են...

Ահա և գիւղը, ահա այն ժողովուրդը, որ գիտէ մեռնել և
 արտասուել միայն՝ առանց մտածելու, որ կարելի է խուսափել
 գերեզմանից և՛ արցունքից: Շարուած են կամերի վրայ և ա-
 նասունները՝ նրանց պէս խեղճ, նրանց պէս հնազանդ՝ քաշում
 են նրանց չոր հէղանի վրայից անվերջ պտոյտներով: Ողջ
 գիւղն է այստեղ: Կոացած գլուխներ, լայն, տափակ քրտնա-
 թոր թիկունքներ, որոնք դարերի ընթացքում այնքան ծեծուել
 են, անարգուել, վիրաւորուել: Նայում եմ այդ պատկերին, և
 ինձ համար հասկանալի է դառնում այս մարդասպան ճանա-
 պարհը: Դարերի մառախուղը պնդացրել է սրանց հոգու աչքե-
 րը, և յարատև բեռը ոչնչացրել կամքը, ձեռներէցութեան ոգին
 սպանել: Էլ մարդիկ չեն, այլ երեխաներ, որոնց ձեռքից պէտք
 է բռնել, քաշ տալ յետևից, կամ առաջ քշել, տանել դէպի բա-
 րին և գեղեցիկը: Կամազուրկ, սարուկ հօտ, որ առաջնորդ է
 ուզում, որ դողում է իր սեփական կամքից և հրաժարում է
 այն բոլորից, ինչ իրա անհասկացողութեանը ինքնուրոյն պատ-
 կերը կը տայ: «Խեղճ ժողովուրդ...» մտմտում եմ ես և մենք
 անցնում ենք: Այժմ մեր առաջն է Ախուրեանը, պէտք է անց-
 նել: Այստեղ նա փոռել է քմահաճ կերպով, լայնացել է և իր
 ափերը ձգել իրարից հեռու, հեռու, հեռու: Կամուրջ չկայ, կա-
 ռապանը ասում է, որ ինքը կառքը կ'անցկացնի մի կերպով,
 իսկ մեզ խնդրում է իջնել, մի քիչ քայլել և ներքևում նաւա-
 կով անցնել: Այս էլ մի բան է, որ գոնէ նաւակ կայ: Կառա-
 պանը քշում է կառքը ջրերի մէջ, իսկ մենք քայլում ենք նրա
 ցոյց տուած ուղղութեամբ և սպասում ենք նաւակին: Միև
 ափից պոկուում է մի մութ ու անձև բան, որի մէջ կանգնած է
 մի մարդ և շարժում է դէպի մեզ: Դա նաւակն է իր թիավա-
 րով: Նա հասնում է մեզ և յայտնում է, որ նաւակը մի
 քառակուսի արկղ է, ձվ գիտէ սկզբում ի՞նչի համար շինուած.
 թին՝ գոմի մի թիակ է, իսկ թիավարը մօտակայ բոստանչին
 է, որ իր պարապ ժամերին սիրում է այդ արկղով մարդիկ
 կրել մի ափից միև ափը: Ոչ դէկ, ոչ նստարան, յատակն էլ
 ջրով լի: Մենք կուշտ ծիծաղում ենք այս անօրինակ նաւակի

և նոյնքան անօրինակ թիւ վրայ. թիավարը միանում է մեզ հետ, բայց հաւատացնում է, որ իբ նաւակը թէև սուր ծայր չունի և ոչ էլ ղէկ, բայց ծովի վրայ էլ կը լողայ և հրաւիրում է նստել: Ոտներնիս թըղելով, մենք մի կերպ տեղաւորում ենք այս քառակուսի արկղի մէջ, և թիավարն սկսում է իր թիակով յետ մղել ջուրը, որ այս այլանդակութիւնը շարժուի: Եւ նա՛ այնուամենայնիւ շարժում է, այդ քառանկիւնի նաւակը և մեզ միւս ափն է ձգում:

Աչքս չեմ կարողանում հեռացնել այս նաւակից, ակամայ հետևում եմ, թէ ինչպէս տէրը ցած իջաւ, ինչպէս նա պարանը կապեց ցցին լուսթեամբ և թիակը ուսին դնելով պատրաստուեց հեռանալ: «Բարեկամ ասում եմ, դոնէ այս նաւակի քիթը սուր շինէիր, որ հեշտ պատուէր ջուրը»: Նա դարձեալ ժպտում է միամիտ կերպով և հասկացնում, որ այդպէս էլ լաւ է, և որ դեռ ոչ մի դժբախտութիւն չի պատահել: Ի հարկէ գետի վարար ժամանակ երթեկութիւնը դադարում է:

Ճանապարհներ չկան, կամուրջ չկայ, նաւակն անդեկ ու քառակուսի, ամեն ինչ քառակուսի, և՛ կամք, և՛ միտք, և՛ հոգի: Ա՛խ, այնպէս կուղէի տեսնել այդ բոլոր գիւղացիներին միասին, խօսել, խօսել նրանց հետ և իմանալ, թէ նրանք ինչո՞ւ են այդպէս: Ես համարեա հաւատացած եմ, որ նրանք ինձ յուսահատական բաներ կ'ասեն, որ իմ նկատած ցաւալի երեւոյթը կապուած է մի շարք այլ պայմանների հետ, որոնց առաջ մարդ կանգ կառնի, ինչպէս անանցանելի ժայռի առաջ մութ գիշերին: Այդ ժողովուրդը մի համր հսկայ է, որ միայն տառապանք է տեսել և նրա հոգին ծովի պէս մութ, ծովի պէս լայն, հազար ու մի համր գաղտնիքներ ունի երևի: Եւ այդ հոգու ներսը թափանցելու համար ճանապարհը նոյնքան դժուարին է, որքան մեր անցածը: Ես չեմ խօսում նրանց հետ, ոչ ոք չի խօսում. մենք նայում ենք ու անցնում, էլ ի՞նչ եմ վրդովւում ու անիծում: Ի՞նձ պէս հազար մարդ օրական կարող է անցնել այս ճանապարհով, անիծել ու վրդովուել, և դրանով երկրի կարգի, կեանքի այս ցաւալի պատկերը չի փոխուի: Ուրիշ բան է հարկաւոր, ուրիշ խօսք՝ ջերմացնող ու թափ տուող, հիմնաւորապէս յեղաշրջելու այս անճարակ կեանքը, մի փոքր փայլ տալու այս հանդած աչքերին:

Այս ժողովուրդն այնպէս հեշտ է վերածնւում...

Իմ խոհերն ընդհատում է կառապանը որ խնդրում է առաջի վերելքը բարձրանալ և իրան համել, որովհետև այստեղ գետափին կառքը նստել հնարաւոր չէ: Կառապանի ցանկութիւնը կատարւում է ճշտութեամբ. բողոքն ու տրտունջն

անօգուտ է: Ճանապարհն անցնում է բարձրից, դէպի ձախ՝ խոր ձորակի միջից գալարում է Ախուրեանը, աներևոյթ ու անձայն: Հակառակ փոում երևում է մի հայ գիւղ, դա Չրփլունն է. պատկերը նոյնն է, մի սև քարաշէն եկեղեցի և նրա շուրջը ողորմելի խրճիթներ: Կալ ու կուտի օրերն են. գիւղի կողքին բազմաթիւ կամեր դառնում են հէշանի վրայ. և մարդ ու կին, մեծ ու փոքր աշխատում են նրա շուրջը: Հէնց այստեղ, կալերի դէմ ու դէմ է Ախուրեանի մի հին կիսաւեր կամուրջը, որ այժմ կոչւում է Չրփլուի կամուրջ: Իջնում ենք կառքից, քայլում խոզանով և դիմում այնտեղ:

Քսան մետր խորութեան մէջ հոսում է Ախուրեանը յոգնած ու ծոյլ, նա այստեղ դանդաղում և հանգստանում է հսկայ ժայռի հովանու տակ, որ բարձրանում է հէնց ցրերի միջից, միակուտը և ուղղահայեաց և յօնքերը կիտած, խոժոռ ու անհամբոյր՝ վերից նայում է վար: Հակառակ փիւր, որի վրայ մենք ենք կանգնած՝ այնպէս ահարկու պատկեր չունի. նա աւելի ցած է հանդիպակաց ժայռից, բայց դարձեալ քարոտ ու կուռ պատուանդան է: Ահա այստեղ է բարձրանում այն կիկլոպեան շէնքը, որ մեր հայրերը անուանել են կամուրջ: Մի հսկայ ու խիզախ գործ, հզօր մտքի մի ըմբոստ յղացում, որ այժմ էլ իր խեղճութեան և աւերածի մէջ հիացմունքի, ապշութեան խառն զարգանդ է պատճառում նայողին: Մի հատիկ քարի կամար է ամբողջ կամուրջը, որ մի օր, մի հպարտ վարպետի կամքով բացել է թևերը և հանդիպակաց ժայռն ու գետը գրկել անազնի բարձրութիւնից, իր սալած մէջքը փոելով կարաւանների, հօտերի, նախիրների, սայլերի, իշխանական կառքերի, աշտարհակալ զնդերի և նրանց երիվարների ոտքերի տակ: Եւ այսպէս դարեր ու դարեր՝ մինչև որ մի օր, մի անէծքի օր ասիական բարբարոսների մի արշաւանքի ժամանակ, նրանց պետը գտել է, թէ Ախուրեանն այստեղ կամուրջի պէտք չունի և հրամայել է խորտակել հայի հանճարի սքանչելի արտադրութիւնը: Եւ նրա աւերածը գուցէ աւելի դժուար է եղել քան կառուցումը: Հագի-հագ կարողացել են խորտակել կամուրջի մի բազուկը, այն՝ որ հանդիպակաց ժայռի ուսին էր յենուած: Ե՞րբ է կատարուել այդ բարբարոս գործը, ո՞վ կարող է ասել: միայն այդ ժամանակից Ախուրեանի վրայ կայ մի պատկեր, որ կարող է թուիչ տալ շատ բանաստեղծների երազուն մտքին, և թախծոտ, մեղանխոլիկ հոգիներում ամենացաւոտ յուշեր զարթեցնել: Այս կամուրջի մնացորդը մի կատաղի վիշապ է կարծես, որ վիզը գալարուն ու բաց երախով թափ առած նետում է դէպի հակառակ փիւր, ուր դարաւոր

Ժայռն է ցցուած, իր հին պատուանդանը, մռայլ, անհամբոյր
և անդրդուելի: Երկու ափերից յաղթական կերպով դէմ առ դէմ
ցցուած այդ բարէ զանգուածներից, չգիտես որն է բնութեան
և որը մարդկային ձեռագործ. թոււմ է, թէ երկուսն էլ մի օ-
րում, տարերային թափով դուրս են վիժուած երկրի արգան-
գից, և իւրաքանչիւրն աշխատում է առաջինը նետուել
հակառակ ափը: Յուսահատ զայրոյթի պէս մի բան կայ
մանաւանդ փլուած կամուրջի կեցուածքի, նրա ցցուած քարերի
նոյնիսկ մահացու ճեղքուածքի մէջ, որ նրա թիկունքի երկա-
րութեամբ անցնում է, որպէս մշտական սպառնալիք վերջնա-
կան աւերածի: Կանգնած են դէմ առ դէմ այդ ժայռն ու աւե-
րակ կամարը և նայում են վար, ուր սև անդունդի մէջ դալար-
ւում է Ախուրեանը, որը կարծես դիտմամբ դանդաղում է այստեղ
իր ընթացքը մի փոքր դիտելու համար իր գլխի վրայ կա-
խուած համր հսկանների պատկերը, մի փոքր զովանալու նրանց
ստուերի տակ: Ժայռն ու կամարը էլ իրար չեն հասնում, բայց
ամենայն օր, առաւօտեան մէկը և երեկոյեան միւսը՝ իրանց
ստուերներով փոխադարձ համբոյրի պատրանքով աշխատում
են ապրել այն երազ օրերը, երբ նրանք գրկուած էին զոյգ
սիրահարների պէս և միասին զուարճանում էին դիտելով ի-
րանց պատկերը Ախուրեանի յեղյեղուկ ալիքների մէջ:

Բարձրանում ենք վեր, քայլում ենք կամուրջի վրայ,
առաջանալով դէպի գետը. սալայատակը դեռ պահել է հին
ոտների տակ տրորուած քարերը, որոնց արանքից բարձրա-
ցած խոտը իր արմատներով կամաց-կամաց ճանապարհ է բաց
անում անձրևների համար դէպի կամարի ներսը: Ա՛յնքան դա-
րեւ փոքրիկ ծակոտիկներից անձրևի և ձիւնի շուրջ ծծուում է,
սուզուում և հազիւ մինչև այժմ բացել է մի ճեղք կամուրջի եր-
կարութեամբ, որ անշուշտ մի օր կը խորտակի այդ հսկայ
կազմուածքը, որքան և նա կուռ լինի: Այս բարձրութիւնից
դժուար է վար նայել ախուրեանին առանց սոսկումի և գլխի
պտոյտի, իսկ մօտենալ անդունդի վրայ կախուած կամարին՝
անկարելի է, անկման սարսափը նեղում է մարդուն:

Վար ենք իջնում և ներսի դռնից ներս ենք մտնում կա-
մուրջի փոքր. մեր առջև բացւում է մի նոր հետաքրքիր տե-
սարան: Երկու զուգահեռական կամարակապ սրահներ ձգւում
են կամուրջի մի ծայրից միւսը, հեռաւոր տեղերից եկած կա-
րաւանների և ճանապարհորդների ազատստանն է այս: Կամուրջն
այսպիսով կրկնակի նպատակի է ծառայել: Դուրս ենք դալիս
և կրկին նայում ենք վեր, դէպի կամուրջի կատարը, բարձր,
սրբան բարձր է այն: Ձախ ափին՝ ժայռից հեռու խաղում են

գիւղի մանուկները, նրանք ձեռները ճակատներին հովանի արած՝ նայում են ճամբորդներին, ապա անեղատեսիլ կամուրջին և զարմացած են ու հետաքրքրուած: Նրանք չեն համարձակուած մօտենալ գետին, ժայռի կատարից վար նայել: Կեռուից միայն դիտում են աւերակ կամարի ցից կատարը: Նըրանց սկանջին մայրերը շատ են փսփսացել հին աւանդութիւնները այն երջանիկ օրերի, երբ վիշապ ու դև ձեռնասուն անասունների պէս քարեր էին կրում և սուրբերի աղօթքով հրաջքներ էին կատարուած, ինչպէս այս կամուրջը: Աւանդութիւններ՝... մեր հին, մեծագործ սերունդը իր փառքով ու թշուառութիւններով, իր զօրեղ կրքերով և ինքնատիպ քաղաքակրթութեամբ, նոր մանրացած խղճուկ սերնդի համար դարձել է լուր աւանդութիւն, անհասանելի հրաջք, ինչպէս այս կամուրջը, որ մի դառն հեգնութեամբ կոչուած է Չրփլուի կամուրջ, այս խեղճ ու կրակ Չրփլուի, որ անշուշտ դողում է նրա աւերակներից և ուշ գիշերին լեգենդաներ փսփսում նրա անցեալի և նրա աւերածի մասին:

Աւանդութիւնների և աւերակների աշխարհ է մեր հայրենիքը...

Հեռանում ենք մտախոհ ու տխուր, թողնելով՝ որ ժայռն ու կիսաւեր կամարը՝ էլի դարեր, առաւօտ ու երեկոյ, ստուերի մահաշունչ համբոյր ուղարկեն իրար, այլևս երբէք չգրկուելու համար:

Ա. Ահարոնեան

(Կը շարունակուի)